ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հունիսի 25-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «**ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ-2025/04**»

«ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ Կոտայքի մասնաճյուղի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով բժշկական ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ-2025/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025 թվականի հունիսի 24-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025 թվականի հունիսի 25-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրումներ N 1

Հարգելի Պատվիրատու, ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ-2025/04 ծածկագրով մրցույթի շրջանակներում խնդրում ենք տրամադրել ստորև կետերի մասով պարզաբանումներ. 1. Ապահովագրական գումար (ծառայությունների մատուցման առավելագույն սահմանաչափ յուրաքանչյուր անձի գծով), 2. Յուրաքանչյուր ծառայության գծով նախատեսված առանձին սահմանաչափ (փոխհատուցման ենթակա առավելագույն գումար)

Պարզաբանում N 1

Հարգելի գործընկեր տեղեկացնում եմ Ձեզ, որ յուրաքանչյուր անձի համար նվազագույն ապահովագրական գումարը պետք է լինի է 3 000 000 ՀՀ դրամ: Առանձին ծառայությունների մասով սահմանաչափեր չկան, բացառությամբ՝

Հիվանդասենյակի արժեքի հատուցում՝ նվազագույնը 10,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր օրվա համար

Ողնաշարի ճողվածքի վիրահատական բուժում՝ մինչև 400,000 ՀՀ դրամ (արժեքի մեջ ներառվում են նաև բոլոր նախավիրահատական լաբորատոր և գործիքային հետազոտությունների արժեքները՝ ներառյալ ՄՌՇ կամ ՀՇ հետազոտությունները):

Վնասվածքին հաջորդող ֆիզիոթերապևտիկ և վերականգնողական բուժում՝ մինչև 100,000 ՀՀ դրամ սահմանաչափով:

Օպտիկական լինզաների, ապակիների և շրջանակների ձեռքբերման ծախսերի հատուցում տեսողության փոփոխության դեպքում (առնվազն 0.5-ով) մինչև 30,000 ՀՀ դրամ:

Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով), Անգիոպլաստիկա դեղապատ բալոնով համախառն սահմանաչափ 1,400,000 ՀՀ դրամ

Նեյրովիրաբուժական վիրահատություններ՝ փակ ներանոթային եղանակով, 1,500,000 ՀՀ դրամ սահմանաչափով:

Ստամատոլոգիական և ակնաբուժական ծածկույթ ունենալը պարտադիր է սահմանաչափերը սահմանվում են ապահովագրական ընկերությունների կողմից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «**ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ-2025/04**» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Այվազյանին:

Հեռախոս +374 99 04 12 92,
Էլ. փոստ legesgnumner@gmail.com
Պատվիրատու՝ «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ Կոտայքի մասնաճյուղ